Հավելված 2
Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ,
տարածքային կառավարման նախարարի
2013 թվականի Մայիսի «2»-ի
թիվ 54-Ա հրամանի

## Մեթոդական ուղեցույց

## Վիճակագրական տվյալների հավաքագրման թերթիկի լրացման

### Բնակչություն

Մշտական բնակչության թվաքանակն ըստ բնակավայրերի տարեսկզբի դրությամբ:

Մշտական բնակչություն – յուրաքանչյուր համայնքի մշտական բնակչության թվաքանակը հաշվարկվում է դրանում հաշվառված՝ մշտապես ներկա և ժամանակավոր բացակա անձանց ընդհանուր թվաքանակների հանրագումարից:

Մշտապես ներկա բնակչություն - մշտապես ներկա են համարվում համայնքում հաշվառված և հաշվառման ժամանակ ներկա անձինք:

Ժամանակավոր բացակա բնակչություն - ժամանակավոր բացակա են համարվում հաշվառման պահի դրությամբ համայնքի տարածքից մինչև մեկ տարի ժամկետով բացակայող հետևյալ անձինք.

- բարձրագույն, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, հանրակրթական և գիշերօթիկ դպրոցներում, ուսումնարաններում սովորելու մեկնած և ուսման ընթացքում ուսումնական հաստատության գտնվելու վայրում բնակվող անձինք (հանրակացարաններում, գիշերօթիկներում, մասնավոր բնակարաններում),
- համայնքի տարածքից դուրս աշխատող և ըստ աշխատանքի վայրի ժամանակավոր բնակվող անձինք,
- ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձինք,
- ազատազրկման վայրում գտնվող անձինք,
- համայնքում գրանցված, բայց քաղաքային վայրերում բնակվող կենվորները:

Տնային տնտեսությունների թիվը տվյալ համայնքում մշտապես բնակվող տնային տնտեսությունների թիվն է: Տնային տնտեսությունը մեկ անձ է կամ անձանց խումբ, որոնց համար ընդհանուր է բյուջեն և բնակվելու վայրը: Ընդ որում, բարեկամական կապերը պարտադիր չեն համարվում:

Բնակչության սոցիալական կազմը

Կենսաթոշակառուներ - անձինք, որոնք տարիքի, հաշմանդամության, կերակրողին կորցնելու և այլ դեպքերում աշխատունակության մասնակի կամ լրիվ կորստի կապակցությամբ ստանում են կորցրած եկամտի փոխհատուցում:

Հաշմանդամներ – անձինք, որոնք առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների (անձի ինքնասպասարկման ունակության, ինքնուրույն տեղաշարժվելու, կողմնորոշվելու, հաղորդակցվելու, սեփական վարքը հսկելու, ուսումնառելու և աշխատանքային գործունեությամբ զբաղվելու (երեխաների համար՝ նաև խաղալու) կարողությունների կամ հնարավորությունների լրիվ կամ մասնակի կորուստ) հետևանքով ունեն սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն:

Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինն անձին հաշմանդամ է ճանաչում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչներին և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշներին համապատասխան՝ ելնելով բժշկասոցիալական փորձաքննության արդյունքներից:

Հայաստանի Հանրապետության տարածքում փախստականի կարգավիճակ ունեցող անձանց թվաքանակը – ըստ Ապաստանի և փախստականների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի՝ փախստականը Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձ է, որը ռասայական, ազգային, կրոնական, որոշակի սոցիալական խմբի պատկանելիության կամ քաղաքական համոզմունքների համար հետապնդումների զոհ դառնալու հիմնավոր երկյուղի պատճառով գտնվում է իր քաղաքացիական պատկանելիության պետությունից դուրս և չի կարող կամ չի կամենում օգտվել այդ պետության պաշտպանությունից, կամ, չունենալով որևէ պետության քաղաքացիություն և գտնվելով իր նախկին հիմնական բնակության վայրի պետությունից դուրս, չի կարող կամ չի կամենում վերադառնալ այդ պետություն, կամ եթե անձը միաժամանակ մի քանի պետության քաղաքացի է, սակայն երկյուղ ունի, որ չի կարող օգտվել այդ պետություններից որևէ մեկի պաշտպանությունից: Լրացվում է Հայաստանի Հանրապետության փախստականի կարգավիճակ *ստացած անձանց* թվաքանակը, այդ թվում նաև նրանց վկայականներում նշված 16 տարին չլրացած երեխաների թվաքանակը:

## Մշակութային և կրթական հաստատություններ, մարզական կառույցներ

Գրադարանը տեղեկատվական, մշակութային, գիտական և կրթական գործունեություն իրականացնող կազմակերպություն է, որն ունի համակարգված հավաքածու և այն տրամադրում է ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամանակավոր օգտագործման համար:

Գրադարանային հավաքածուն տեղեկատվական նյութական տարբեր կրիչների ամբողջություն է:

Արվեստի դպրոցները սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների գեղագիտական զարգացման համար իրականացնում են արտադպրոցական կրթություն՝ արվեստի ոլորտում:

Սովորողների թվաքանակը արվեստի դպրոցներում արտադպրոցական կրթություն ստացող երեխաների թվաքանակն է:

Երաժշտական դպրոցները սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների գեղագիտական զարգացման համար իրականացնում են արտադպրոցական կրթություն՝ երաժշտության ոլորտում:

Սովորողների թվաքանակը երաժշտական դպրոցներում արտադպրոցական կրթություն ստացող երեխաների թվաքանակն է:

Մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնները սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների գեղագիտական զարգացման համար իրականացնում են արտադպրոցական կրթություն՝ մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոններում:

Սովորողների թվաքանակը ստեղծագործական և գեղագիտական կենտրոններում արտադպրոցական կրթություն ստացող երեխաների թվաքանակն է: Նախադպրոցական հիմնարկները (տարվա ընթացքում 10 ամսից ոչ պակաս աշխատող) ապահովում են 1 տարեկանից մինչև 6 տարեկան երեխաների խնամքը, առողջարարությունը, դաստիարակությունը և ուսուցումը: Երեխաների թվաքանակը նախադպրոցական հիմնարկներ հաճախող 1 տարեկանից մինչև 6 տարեկան երեխաների թվաքանակն է:

Հանրակրթական դպրոցներ - Այս հաստատություններում ուսումնական գործընթացը կարգավորվում է հանրակրթական ուսումնական պլանով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցով և դասացուցակով:

Սովորողների թվաքանակը 1-11-րդ դասարաններում սովորող աշակերտների թվաքանակն է:

Տարրական ընդհանուր դպրոցներ - Միջնակարգ ընդհանուր կրթության առաջին աստիճանը՝ 1-4-րդ դասարաններ: Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է լեզվամտածողության, տրամաբանական հիմքերի, ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը:

Սովորողների թվաքանակը 1-4-րդ դասարաններում սովորող աշակերտների թվաքանակն է:

Հիմնական ընդհանուր դպրոցներ - Միջնակարգ ընդհանուր կրթության երկրորդ աստիճանը՝ միջին դպրոցը, ընդգրկում է 5-9-րդ դասարանները: Միջնակարգ հանրակրթական դպրոցի առաջին երկու աստիճանները կազմում են հիմնական դպրոցը: Այս աստիճանում ուսուցումը նպատակաուղղված է առողջ ապրելակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը:

Միջին դպրոցում սովորողների թվաքանակը 5-9-րդ դասարաններում սովորող աշակերտների թվաքանակն է:

Միջնակարգ (լրիվ) ընդհանուր դպրոցներ - Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում: Այս աստիճանում ուսուցումը նպատակաուղղված է հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը:

Սովորողների թվաքանակը 1-12-րդ դասարաններում սովորող աշակերտների թվաքանակն է:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում կրթության նպատակը սովորողներին հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքային գործունեության համար նախապատրաստելն է:

Սովորողների թվաքանակը նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում սովորողների թվաքանակն է:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթության նպատակը միջին մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն է, միջնակարգ ընդհանուր

կրթության հիմքի վրա ընդհանուր և մասնագիտական գիտելիքների ընդլայնումն ու խորացումն է:

Սովորողների թվաքանակը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների թվաքանակն է:

ԲՈՒՀ - Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերապատրաստումն է, միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի կրթության զարգացման պահանջների բավարարումը:

Սովորողների թվաքանակը բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների թվաքանակն է:

Ֆիզկուլտուրային և սպորտային կազմակերպությունները սպորտային գործունեություն իրականացնող կազմակերպություններն են:

Մարզադպրոցները մարզական դաստիարակություն իրականացնող դպրոցներն են:

Մարզական ակումբները մարզական դաստիարակություն իրականացնող ակումբներն են:

Հասարակական մարզական ընկերությունները հասարակական հիմունքներով մարզական դաստիարակություն իրականացնող ընկերություններն են:

## Առողջապահություն

Հիվանդանոցներ, առողջության կենտրոններ, պոլիկլինիկաներ (խառը, մեծահասակների և մանկական), ամբուլատորիաներ և բուժ-մանկաբարձական կետեր են համարվում այն բժշկական հաստատությունները, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. դեկտեմբերի 5-ի թիվ 1936-Ն որոշման պայմաններին:

## Կոմունալ-բնակարանային տնտեսություն, կապ

Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը, քառ. մ - Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը ներառում է բնակելի տների, բնակարանների, մասնագիտացված տների (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկական խնամատարական կազմակերպություններ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ), ծառայողական բնակելի շենքերի և այլ շինությունների, բնակվելու համար պիտանի այլ բնակելի կացարանների մակերեսները:

Բնակարանային ֆոնդի մեջ չեն ներառվում ամառանոցները, սպորտային և տուրիստական բազաները, մոթելները, քեմփինգները, զորանոցները, երթուղային վագոն-տնակները և այլ շենքեր և շինություններ՝ նախատեսված հանգստի, ժամանակավոր և սեզոնային բնակության համար՝ անկախ դրանցում քաղաքացիների բնակվելու հանգամանքից:

Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր մակերեսը, քառ.մ - Բնակելի տունը բնակավայրի տարածքում առանձին հողամասի վրա կառուցված, առանձին փոստային համար ունեցող, բնակելի, օժանդակ և կոմունալ հարմարություններով կառույց է:

## Արդյունաբերություն

Արդյունաբերական կազմակերպություններ (անհատ ձեռնարկատերեր) – Իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր (այսուհետ կազմակերպություններ), որոնք արտադրական գործունեություն են իրականացնում տվյալ համայնքում (անկախ գրանցման վայրից):

Հողային ֆոնդ և գյուղատնտեսություն

Ըստ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների հողերի հաշվառման գրքերի և դրանց վարման մասին ցուցումները հաստատելու վերաբերյալ թիվ 203-Ն հրամանի՝ ստորև բերվում է հողային ֆոնդի դասակարգումն ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողատեսքերի և գործառնական նշանակության:

Գյուղատնտեսական նշանակության հողեր - Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար օգտագործվող հողատեսքեր են: Գյուղատնտեսական նշանակության հողերն ըստ հողատեսքերի բաժանվում են՝ վարելահողերի բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի և այլ հողատեսքերի:

Վարելահող - Գյուղատնտեսական հողատեսքը, որը սիստեմատիկաբար մշակվում և օգտագործվում է գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքսերի տակ, ներառյալ բազմամյա կերային խոտաբույսերը, ինչպես նաև ցելերը:

Բազմամյա տնկարկ
1) Պտղատու այգի և հատապտղանոց - բազմամյա տնկարկը, որը հիմնվել է պտուղ և հատապտուղ ստանալու համար:
2) Խաղողի այգի-բազմամյա տնկարկը, որը հիմնվել է խախող ստանալու համա

Խոտհարք - Գյուղատնտեսական հողատեսքը, որը սիստեմատիկաբար օգտագործվում է խոտհնձի համար:

Արոտավայր - Գյուղատնտեսական հողատեսքը, որը սիստեմատիկաբար օգտագործվում է անասունների արածեցման համար և օգտագործումը համարվում է հիմնական:

Այլ հողատեսք - Գյուղատնտեսական նպատակների համար նախատեսված, սակայն դեռևս գյուղատնտեսության արտադրության մեջ չօգտագործվող այլ հողերը (աղուտներ, ավազուտներ, ձորեր, ձորակներ, քարքարոտ տարածություններ), ինչպես նաև դաշտամիջյան ճանապարհները:

Բնակավայրերի հողեր - Բնակավայրերի հողեր են համարվում բնակավայրերի զարգացման, կենսագործության և բարեկարգման համար նախատեսված հողերը:

Բնակելի կառուցապատման հողեր - Բնակելի կառուցապատման հողեր են համարվում անհատական բնակելի տների, դրանց կից օժանդակ շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերի ու շինությունների կառուցման և սպասարկման համար տրամադրված կամ նախատեսված հողամասերը:

Հասարակական կառուցապատման հողեր - Բնակչության սոցիալական սպասարկման վարչական և հասարակական կազմակերպությունների, այլ հասարակական նշանակության

շենքերի, շինությունների կառուցման և սպասարկման համար տրամադրված կամ նախատեսված հողերը (ուսումնական և նախադպրոցական հաստատություններ, գիտական հիմնարկներ՝ օդերևութաբանական և սեյսմիկ կայաններ, հիվանդանոց, անասնաբուժարան, ակումբ, գրադարան, կուլտուրայի տուն, կինոթատրոն, խաղատուն, բենզալցակայան, գազալցակայան, ավտոտեխսպասարկում, առևտրի և սննդի օբյեկտներ, գյուղա(քաղաքա)պետարան, վարչական այլ շենքեր և շինություններ), ինչպես բնակավայրի շրջագծում, այնպես էլ բնակավայրի շրջագծից դուրս:

Խառը կառուցապատման հողերը - Բնակելի, հասարակական կառուցապատման, ընդհանուր օգտագործման հողերի այնպիսի համադրությամբ կազմավորված տարածքները, որտեղ դրանցից որևէ մեկը գերակշիռ նշանակություն չունի:

Ընդհանուր օգտագործման հողեր - Բնակավայրի շրջագծում գտնվող այն հողերը, որոնք զբաղեցված են փողոցներով, հրապարակներով, խաղադաշտերով, զբոսայգիներով, պուրակներով, հասարակության կողմից ընդհանուր օգտագործման այլ տարածքներով:

Այլ հողեր - Բնակելի, հասարակական, խառը կառուցապատման և ընդհանուր օգտագործման համար նախատեսված, սակայն դեռևս չկառուցապատված ազատ հողերը:

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր - Արդյունաբերական, գյուղատնտեսական արտադրության, տեխնոլոգիական սարքավորումների շահագործման պայմաններ ապահովող, պահեստարանների համար նախատեսված շենքերի ու շինությունների կառուցման ու սպասարկման, ինչպես նաև ընդերքի օգտագործման համար տրամադրված կամ նախատեսված հողամասերն են:

Արդյունաբերական օբյեկտներ - Գործարանները, ֆաբրիկաները, արդյունաբերական հանգույցները և համալիրները, արտադրական օբյեկտները:

Գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ - Գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման ձեռնարկությունները (փակ ջերմատներ, անասնագոմեր, թռչնաֆաբրիկաներ, գյուղմթերքների արտադրության այլ ձեռնարկություններ), դրանց սպասարկող տարածքները և այլն:

Պահեստարաններ – Պահեստները, սառնարանները, բազաները:

Ընդերքօգտագործման համար տրամադրված հողեր –մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման համար տրամադրված ու նախատեսված հողամասերը:

Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր - Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր են համարվում էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և համապատասխան գծային ենթակառուցվածքների օբյեկտների կառուցման համար տրամադրված հողերը:

Էներգետիկայի հողեր – Ջերմային, ատոմային, հիդրոէլեկտրակայաններով, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերով, մայրուղային գազատարերով և էներգետիկ այլ նպատակներով

օգտագործվող շենքերի, շինությունների, կառուցման և սպասարկման համար տրամադրված հողամասերը:

Կապի օբյեկտների հողեր – Կապի, ռադիոհաղորդումների, հեռուստատեսային օբյեկտներ, ռադիոռելեային և վերահեռարձակվող կայանների և կապի նշանակության այլ օբյեկտների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողամասերը:

Տրանսպորտի օբյեկտների հողեր – Երկաթուղային, ավտոմոբիլային, օդային, խողովակաշարային տրանսպորտի օբյեկտների, երկաթուղային կայանների, երկաթգծերի, երկաթուղային և ավտոճանապարհների, թունելների և կամուրջների, ավտոկայանների, օդանավակայանների և այլ տրանսպորտային օբյեկտների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողամասերը:

Կոմունալ օբյեկտների հողեր - ջրային համակարգերի՝ Կոմունալ օբյեկտների, ջրամատակարարման, ջրահեռացման, կոյուղագծերի, օրվա կարգավորիչ ջրամբարների, մաքրման կայանների, պոմպակայանների, (բացառությամբ ոռոգման համար նախատեսված) աղբավայրերի, կենցաղային (բաղնիք, լվացքատուն, կաթսայատուն) և այլ նմանատիպ օբյեկտների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողերը:

Հատուկ պահպանվող տարածքների հողեր - Հատուկ պահպանվող տարածքների հողեր են համարվում գեղագիտական, բնապահպանական, գիտական, պատմական և մշակութային, հանգստյան, առողջարարական և այլ արժեքավոր նշանակություն ունեցող հողամասերը, որոնց համար սահմանված է հատուկ իրավական ռեժիմ:

Բնապահպանական հողեր - Գիտական, գեղագիտական և հանգստի նշանակություն ունեցող և հատուկ պահպանության նպատակով նախատեսված բնության հուշարձանների, արգելանոցների, ազգային և ծառաբանական զբոսայգիների և պարկերի, բուսաբանական այգիների, արգելավայրերի (բացառությամբ որսորդական) հողերը:

Առողջապահական նպատակով նախատեսված հողեր - Բնական, բուժական պաշարներով (հանքային ջրերով, բուժիչ ցեխերով և այլն), բարենպաստ կլիմայով և այլ բնական գործոններով ու պայմաններով օժտված բուժական-առողջարարական վայրերի և առողջարանների հողամասերը, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել հիվանդությունների կանխարգելման ու բուժման համար:

Հանգստի համար նախատեսված հողեր - Բնակչության հանգստի կազմակերպման, զբոսաշրջության, ֆիզիկական դաստիարակության, սպորտային գործունեության կազմակերպման համար նախատեսված և օգտագործվող հողերը (հանգստյան տներ, պանսիոնատներ, ֆիզիկական դաստիարակության և սպորտի օբյեկտներ, զբոսաշրջության բազաներ, մշտական /վրանային/ ձկնորսական և որսորդական տնակներ, մանկական զբոսաշրջիկության կայաններ, զբոսաշրջիկ պարկեր, անտառապարկեր, ուսումնազբոսաշրջային արահետներ, մանկական և սպորտային ճամբարներ, տեղանշված անցուղիներով և նմանօրինակ այլ օբյեկտներ):

Պատմական և մշակութային հողեր - Պատմական և մշակութային արժեքների ու պատմական միջավայրերի պահպանության, հուշազբոսայգիների, հուշահամալիրների, հնագիտական և ճարտարապետական հուշարձանների, այդ թվում՝ պաշտամունքային կառույցների, պատմական և մշակութային արգելանոցների ու արգելավայրերի, պատմության, մշակույթի ու հանգստի օբյեկտների, զինվորական ու քաղաքացիական գերեզմանոցների, դամբարանադաշտերի և պատմական ու մշակութային այլ արժեքներով զբաղեցրած հողամասերը:

Հատուկ նշանակության հողեր – Պաշտպանական, սահմանային, ռազմական նշանակության հողերը, օրենքով պաշտպանվող շենքեր և շինությունները: (Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայր, Հայաստանի Հանրապետության ազգային ժողով, Հայաստանի Հանրապետության կառավարության շենք, դեսպանատներ և այլն):

Անտառային հողեր - Անտառային հողեր են համարվում անտառապատ, կենդանական և բուսական աշխարհի պահպանման, բնության պահպանության, ինչպես նաև անտառով չծածկված, բայց անտառային տնտեսության կարիքների համար տրամադրված կամ նախատեսված հողերը: Անտառային հողերի կազմում կարող են ներառվել նաև գյուղատնտեսական հողատեսքերը: Անտառային հողերն ըստ հողատեսքերի բաժանվում են՝ անտառ, թփուտ, վարելահող, խոտհարք, արոտ և այլ հողեր:

Անտառապատ տարածքներ – Հողատարածություն, որը ծածկված է անտառով, ներառյալ միակցված և չմիակցված անտառային կուլտուրաները և ձորափնյա, գետափնյա անտառաշերտերը ձորերում և հեղեղատներում, գետերի ու ջրամբարների ափերին հիմնված անտառները, անտառապուրակները, ինչպես նաև հատած և այրված անտառները, բացատները, նոսրությունները, չծառակալված անտառհատատեղերը, ոչնչացված անտառները:

Թփուտ – Հողատարածություն, որը ծածկված է բազմամյա, հիմնականում ցածրահասակ տնկարկներով, որոնք չունեն հստակ արտահայտված ծառաբուն, իսկ ճյուղավորումն սկսվում է հողի մակերևույթից:

Այլ հողեր - Հողատարածություններ, որոնք նախատեսված են անտառային կարիքների համար, սակայն ծածկված չեն անտառներով, թփուտներով:

Ջրային ֆոնդի հողեր – Ջրային ֆոնդի հողեր են համարվում ջրային համակարգերի՝ գետերով, բնական և արհեստական ջրամբարներով, լճերով զբաղեցված, ինչպես նաև ջրային օբյեկտների օգտագործման և պահպանության համար առանձնացված հողերը:

Գետեր - Գետերը, գետակները:

Ջրամբարներ - Արհեստական ջրամբարները, ջրավազանները, ձկնաբուծական լճերը:

Լճեր - Բնական լճերը, լճակները:

Ջրանցքներ – Ջրանցքները (ներառյալ օտարման գոտիները), մայր առուները, հեղեղատները:

Հիդրոտեխնիկական, ջրատնտեսային այլ օբյեկտներ հողեր – Ցամաքուրդներ (դրենաժներ), պոմպակայաններ և այլ հիդրոտեխնիկական կառույցներով, ինչպես նաև ջրային օբյեկտների օգտագործման և պահպանման համար զբաղեցված տարածքներ:

14. Պահուստային և պետական ֆոնդի հողեր – համայնքներին, քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության օգտագործման իրավունքով չտրամադրված պետական սեփականության հողերը, ինչպես նաև կոնսերվացիայի արդյունքում տնտեսական շրջանառությունից հանված հողամասերը (ավազուտներ, աղուտներ, քարքարուտներ և այլն):

## Համայնքային ենթակայության ճանապարհներ, տրանսպորտ

Համայնքային ենթակայության ճանապարհներ – համայնքային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ, որոնք կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, մարզերի վարչական կենտրոնների, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհների հետ:

Ամուր ծածկույթով ճանապարհներ են համարվում ասֆալտբետոնե, ցեմենտբետոնե, սև խճային, սև կոպճային, սալահատակած, խճային և կոպճային ճանապարհները:

Բնահողային ճանապարհներ են համարվում համապատասխան կառուցվածք ունեցող ճանապարհները:

Ուղևորատար երթուղիներում ընդգրկված ավտոբուսների քանակը – Ավտոբուս՝ ուղևորների և ուղեբեռի փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոց, որի նստատեղերի քանակը, բացառությամբ վարորդի նստատեղի, գերազանցում է ութը.

Միկրոավտոբուսային երթուղիների քանակը – Ուղևորատար ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղի՝ ուղևորների փոխադրման սկզբնակետից մինչև վերջնակետ (ավտոկայան, երթակարգավարական կետ) ավտոբուսի շարժման սահմանված ընթացուղի:

Ուղևորատար երթուղիներում ընդգրկված միկրոավտոբուսների քանակը – Միկրոավտոբուս՝ փոքր դասի՝ 9-17 նստատեղ ունեցող ավտոբուս:

Ընդհանուր օգտագործման երթուղային ավտոբուսների, միկրոավտոբուսների երթ՝

- երկու վերջնակետերով երթուղիների դեպքում՝ ավտոբուսի շարժը մի ուղղությամբ՝ երթուղու սկզբնակետից մինչև վերջնակետը:
- շրջապտույտային (օղակաձև) երթուղու ժամանակ (այսինքն՝ երբ երթուղու սկզբնական և վերջնական կետը միևնույնն է) երթ է համարվում ավտոբուսի ժամանումը սկզբնակետից դեպի նույն կետը:

Թեթև մարդատար տաքսիների քանակը – Թեթև մարդատար ավտոմեքենաներ - ցուցանիշում հաշվառվում են մինչև 8 մարդ (չհաշված վարորդը) տեղատարողությամբ բոլոր մակնիշների ուղևորատար ավտոմեքենաները:

Ֆինանսական ցուցանիշներ

Համայնքային բյուջեի եկամուտներ – ցուցանիշում հաշվառվում են ընդամենը վարչական և ֆոնդային բյուջեների եկամուտները առանց վարչական բյուջեից ֆոնդային բյուջեին կատարած հատկացումների:

Համայնքապետարանի աշխատակազմ

Աշխատողների թվաքանակը դեկտեմբերի 31–ի դրությամբ - Աշխատողների թվաքանակի մեջ ներառվում են ինչպես փաստացի աշխատանքի ներկայացածները, այնպես էլ տարբեր պատճառներով ժամանակավորապես բացակայողները (հարկադիր պարապուրդ, ամենամյա արձակուրդ, ամենամյա լրացուցիչ արձակուրդ, ծառայողական գործուղում, հիվանդություն, հղիություն և ծննդաբերություն, երեխայի խնամքի հետ կապված արձակուրդ, աշխատանքից կտրված մասնագիտական վերապատրաստում, որակավորման բարձրացման դասընթացներ):

Աշխատողների միջին տարեկան թվաքանակը* - Աշխատողների միջին տարեկան թվաքանակը հաշվարկելու համար աշխատողների թվաքանակից անհրաժեշտ է հանել աշխատողների հետևյալ խմբերը.

ա) հղիության և ծննդաբերության, մինչև 3 տարեկան երեխայի խնամքի հետ կապված արձակուրդում գտնվող կանայք,

բ) առանց աշխատավարձի պահպանման արձակուրդում (այդ թվում ուսումնական, հիվանդության և այլ) գտնվող անձինք:

* Աշխատողների միջին տարեկան թվաքանակը օգտագործվում է միջին աշխատավարձի և այլ միջին ցուցանիշների հաշվարկման համար:

Ոչ լրիվ աշխատանքային օր աշխատողները միջին տարեկան թվաքանակում ներառվում են փաստացի աշխատած ժամերի համամասնությամբ:

Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված վճարումներ (ներառյալ պարգևատրումները և փոխհատուցումները) - Աշխատնաքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները տեղական ինքնակառավարման մարմնի աշխատողների (այլ նաև՝ կազմակերպություններից համատեղությամբ աշխատողները, կապալային կամ քաղ.-իրավական բնույթի պայմանագրերի հիման վրա աշխատողները) կողմից փաստացի կատարված աշխատանքի դիմաց հաշվարկված աշխատավարձն է, պարգևատրումները և փոխհատուցումները: Այն ընդգրկում է աշխատանքի վարձատրության բոլոր տեսակները՝ հաշվարկած դրամական կամ բնեղեն արտահայտությամբ, ներառյալ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում չաշխատած ժամերի համար հաշվարկած գումարները՝ ամենամյա և լրացուցիչ արձակուրդ, տոն օրեր և այլն:

Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները ցույց են տրվում համախառն տեսքով՝ առանց եկամտահարկը և այլ պահումները հանելու: